

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2014 թ.

N 209-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓԱՅՏԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 44-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՔԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 6-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) բնական աղետների և այլ պատճառով տապալված ծառերից գործափայտի բացթողման նվազագույն գինը հաշվարկվում է տվյալ տեսակի գործափայտի (ծառատեսակի) համար սահմանված գնի 50 տոկոսի չափով.

2) գործափայտի և վառելափայտի արտահանումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից իրականացվում է պետական լիազոր մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները (մեկ խտացված խորանարդ մետրի համար) սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1051-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44-Ն որոշումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ
 ՖՈՆԴՈՒՄ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓԱՅՏԻ ԲԱՑԹՈՂՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ**

դրամ (ներառյալ ԱԱՀ)

ՀՀ	Ծառատեսակների անվանումը	Ներքին շուկայի համար			Արտահանման համար		
		Խոշոր տրամագիծը 25սմ և ավելի	Միջին տրամագիծը 13սմ մինչև 25 սմ	Փոքր տրամագիծը մինչև 13 սմ	Խոշոր տրամագիծը 25սմ և ավելի	Միջին տրամագիծը 13սմ մինչև 25 սմ	Փոքր տրամագիծը մինչև 13 սմ
1	2	3	4	5	6	7	8
1.	Գործափայտ (խտացված խորանարդ մետր)						
1)	Հաճարենի, Թխկի, Թեղի	12000	9000	6000	14000	11000	8000
2)	Կաղնի, Հացենի, Լորենի	20000	16000	10000	25000	20000	15000
3)	Բոխի	5000	4000	3000	7000	5000	4000
4)	Տանձենի, Շագանակենի	40000	32000	15000	50000	40000	20000
5)	Արջատխլենի, Սոսենի	50000	40000	20000	60000	50000	25000
6)	Հունական ընկուզենի	70000	40000	20000	80000	50000	25000
2.	Վառելափայտ (դարսված խորանարդ մետր)						
1)	Ինքնամթերում (թափուկից)		240			3000	
2)	Ինքնամթերում (արմատի վրա)		1500			3000	

Ծանոթություն

Ցանկում չնշված ծառատեսակների մթերման նվազագույն գները սահմանվում են պետական լիազոր մարմնի կողմից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ